

ՎԱԶԳԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱԿՈՐՅԱՆ

Երկարատև և ծանր հիվանդությունից հետո 1982 թ. մայիսի 6-ին իր մահականացուն կնքեց անվանի պատմաբան, աղբյուրագետ, մանկավարժ, Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի դափնեկիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Արտաշեսի Հակոբյանը:



Վ. Ա. Հակոբյանը ծնվել է 1913 թ. փետրվարի 14-ին, ՀՍՍՀ Ղուկասյանի շրջանի Լեռնապոլս (նախկին Չոլսի, Լեռնանցք) գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Լեռնի անվանում: 1941 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, 1943 թ.՝ վիրավորվել: 1947-ին աշխատանքի է անցել և մինչև կյանքի վերջն աշխատել ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: Այստեղ 1971-ից սկսած ղեկավարել է հայ ժողովրդի միջին դարերի պատմության բաժինը: Զուգահեռաբար զբաղվել է մանկավարժությամբ: 1933—1974 թթ. պարբերաբար հայ ժողովրդի պատմություն է դասավանդել միջնակարգ դպրոցներում և Կիրովականի մանկավարժական ինստիտուտում: 1948-ին պաշտպանել է դիսերտացիա և ականավոր հայագետ Հակոբ Մանանդյանի ղեկավարությամբ ուսումնասիրած «Արիստոտելի վերագրված Զաղազա

աշխատի աշխատության հայկական թարգմանությունների» ընդարձակ բնագիրը և հայկական մեկնությունները» ուսումնասիրության համար (անտիպ) ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 1967 թ. արժանացել է պատմական գիտությունների դոկտորի աստիճանի՝ «Հայոց կանոնագրքի» ուսումնասիրության և հրատարակության համար: 1974-ին նրան շնորհվել է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ:

Վազգեն Հակոբյանին որպես գիտնականի բնորոշելու համար ամենահարմարը զարմանալի բառն է: Հանգուցյալը զարմանալի էր ամենից առաջ իր խառնվածքով: Քսաներորդ դարի աղմկոտ Երևանում նա նույնքան խաղաղ ու վստահիկ էր, որքան Վենետիկի սուրբ Ղազար կղզում օրհնիտո մազաղաթյա ձեռագրերի վրա կոթնած հայադիտության մեծերը: Միայն զարմանալի աշխատանակության և համբերության շնորհիվ է, որ նրան հաջողվեց ընդամենը երեք տասնամյակի ընթացքում ուսումնասիրել շուրջ 2000 հին հայկական ձեռագրեր և հավաքել, ընտրել, հրատարակության պատրաստել հարյուրավոր ժամանակագիրների, հիշատակագիրների և կանոնների հեղինակների գրավոր ժառանգությունը:

1951 և 1956 թթ. հրատարակված «Մանր ժամանակագրություններ» երկու հատորներում ընդգրկված են շուրջ հարյուր մեծ ու մանր ժամանակագրություններ և ժամանակագրական պատառիկներ, որոնք հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուրներ են: Պրանցից շատերը վերագրված են նաև այլ երկրների պատմական անցյալին: Պրանցից է Երևանի, Խաչատուր Կաֆայեցու ժամանակագրությունը, որը որպես XVI դ. Ղրիմի պատմության առաջնակարգ սկզբնաղբյուր, թարգմանվել է գերմաներենի (է. Շյուց) և դարձել ընդհանուր պատմագիտության սեփականությունը:

Վ. Հակոբյանին միջազգային ճանաչում են բերում մասնավանդ նրա հրատարակած Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի, Լավոզիկի և այլ ժողովների կանոնախմբերի հին հայերեն թարգմանությունները: Վերջիններս երբեմն պահպանել են ավելի ճշգրիտ ընթերցվածքներ, քան ունեն իրենց համար հիմք ծառայած հունարեն ընդգրկի մեզ

հասած ձեռագրերը, որոնք ընդօրինակված են հայերեն թարգմանություններից հետո ընկած ժամանակահատվածում: Վ. Հակոբյանի հրատարակությունների միջոցով հնարավոր է դառնում ճշգրտել հունարեն բնագրում աղճատված ընթերցվածքները: Հրատարակվող գրքաքար տեքստերը բառ առ բառ համեմատել է հունարեն բնագրերի հետ և նշել դրանց տարբերությունները, վեր հանել հայերենի առավելությունները: «Հայոց կանոնագրքի» առաջին և երկրորդ հատորները (1964 և 1971 թթ.) բնագրերի հրատարակության դասական օրինակներ են: Դրանք բազմիցս արժանացել և արժանանում են սովետական ու արտասահմանյան մասնագետների բարձր գնահատականին: Միջնադարյան Հայաստանի սոցիալական պատմության և իրավաբանական մտքի ուսումնասիրության համար անփոխարինելի սկզբնաղբյուրներ հանդիսացող սույն բնագրերի հրատարակությունը պահանջել է տասնյակ տարիներ լատապանք հնագրային ձեռագրերի վրա, ինչպես նաև՝ աղճատված ընթերցվածքները ճշգրտելու ու սկզբնական բնագրերը վերականգնելու հմտություն:

«Հայոց կանոնագրքերին» հաջորդեցին «Հայերեն ձեռագրերի ժէ դարերի հիշատակարաններին» առաջին (1974) և երկրորդ (1978) հատորները, որոնք Վ. Հակոբյանը հրատարակության է պատրաստել անվանի հայագետ Աշոտ Հովհաննեսյանի հետ միասին: Երրորդ հատորը, ինչպես նաև հրատարակության պատրաստման համար դեռևս լրացուցիչ աշխատանքներ պահանջող չորրորդ և հինգերորդ հատորները սպասում են հետմահու հրատարակության:

Վ. Հակոբյանի հրատարակություններին հատուկ են անօրինակ մանրակրկտությունն ու բժախնայությունը, գիտական բարեխղճությունն ու բարձր մակարդակը: Հրատարակված նյութերին ուղեկցում են անհրաժեշտ առաջաբաններ և հանգամանալի ծանոթագրություններ, որոնցից շատերը կարող էին տպագրվել որպես առանձին ուսումնասիրություններ: Այսպես, օրինակ, XVII դ. մատենագիր Հակոբ Կարնեցու «Շինուած Կարնոյ քաղաքին» աշխատությանը նախորդող բաժնում Վ. Հակոբյանը պարզում է, որ այդ գործը մինչև այժմ սխալմամբ է տպագրվել որպես Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» աշխատության անբաժանելի մաս. իրականում դա բոլորովին այլ աշխատություն է: Վ. Հակոբյանին ենք պարտական նաև նույնանուն Ստեփանոս Օրբելյանների (XIV դ. նշանավոր պատմիչի և մեկ այլ ժամանակագրի) աշխատություններից մեկի հեղինակային իրավունքների վերականգնման, ինչպես նաև XV դ. հայ ճանապարհորդ Մարտիրոս Երզնկացու ուղեգրության ճշգրիտ հրատարակության համար:

Րազմավաստակ աղբյուրագետը հրապարակ է հանել մեծ մասամբ անտիպ նյութեր, իսկ նախկինում տպագրված նյութերը վերահրատարակելիս, որպես կանոն, օգտագործել է նախորդներին անհայտ մնացած ձեռագրեր, որոնք էական ուղղումներ են մտքերը մինչև այդ հայտնի բնագրերի մեջ:

Վ. Հակոբյանի գրչին են պատկանում նաև «Շեթում պատմիչի նորահայտ հիշատակարանը և նրա պատմական նշանակությունը», «Վարդան Արևելցու Պատմութիւն տիեզերականի համառոտ խմբագրությունը», «Դավիթ Փոքայրեցու հիշատակարանը», «Армянские источники об Украине и украинцах», «Մատենագրական տեղեկությունների բույսերի սելեկցիայի վերաբերյալ» և այլ աշխատություններ: Բազրատունյաց թագավորության հիմնագիր Աշոտի զահակալույթյան նվիրված նրա հոդվածը 1965 թ. Փարիզում հրատարակվեց ֆրանսերեն և արժանացավ մանագետների ուշադրությանը:

Վ. Հակոբյանը գործուն մասնակցություն է ունեցել հայ-ռուսական հարաբերություններին, հայոց գրերի ստեղծմանը վերաբերող նյութերի, ինչպես նաև Հակոբ Մանանդյանի Երկերի ժողովածուների հրատարակությանը: Նրա մշտական ուշադրության կենտրոնում են գտնվել հայագիտական հրատարակությունները, որոնց նվիրված գրախոսականներում կարելի է գտնել բազմաթիվ նորություններ ու ճշգրտումներ:

Վազգեն Հակոբյանի հրատարակած «Կանոնագիրը Հայոցի» առաջին հատորի վրա գրված է. «Ուսուցչիս» Հակոբ Մանանդյանի հիշատակին», իսկ «Մանր ժամանակագրությունների» երկրորդ հատորի ճակատին գրողմված է հետևյալ մակագրությունը. «Հայերենական մեծ պատերազմում զոհված եղբորս» Գարեգին Արտաշեսի Գինոսյանի հիշատակին»: Այսպիսով գրքերից մեկը նվիրված է գիտութանը՝ Մանանդյանին, մյուսը՝ եղբայրությանը՝ Գարեգինին: Այլ գրքերն այսուհետև միանալով Վազգեն Հակոբյանի մյուս վաստակներին, դառնալու են կանգուն հուշարձաններ և հայագիտության գալիք շահավիղներին՝ ձև հասցնելու մեր ժամանակի ամենահամեստ մի մարդու և ամենավաստակուն հայագետներից մեկի անունը:

ԳԵՎՈՐԳ ԱՐԳԱՐՅԱՆ
Բաճախրական գիտությունների դպրոց